ՌՂԳ.

Անցեալ շաբաթոջ եկն գիր մի ի հալապու քրքճի գրիգորին գրեալ ապրէլի 16 աւուր ի յօ-սէփէ որդւոյ իւրոյ, որ համառօտ բանիւ գրէ այսպէս. Ձկնի որոյ քիլտանցոց Արհի եպիսկոպոսն չուեաց ի հալապոյ տասնապատիկ եղև գրկանք և տուգանք և սոքն քան զոր առաջ էին և ամե-նայն աւուր իբր 40 անձինք ի քրիստոնէից մեռանին ի սովու, մի մասն ի մէջ տանց և 3 մասն ի փողոցս և ի հրապարակս, և ի տաճկաց առաւել ևս. և մանկունք աւելի յոյժ քան զչափ հա-սեալս մեռանին. ուստի վասն բազմութեան նոցին վանդակաւ բարձեալ զդիակունս նոցա և տա-րեալ զչորսն և զհինգն ի միում գերեզմանի թաղեն. ուստի ի շրջիլն ի մէջ մթագոյն չուկայից մեծ զգուշութիւն պիտոյ է, զի մի ոտիւք կոխիցեն զնուաղեալսն ի սովու և զմեռեալս և զանկեալս ի վերայ ճանապարհի, և այլն։ (Յովսէփ եպս. առ Հ. Գրիգոր վարդապետ, 1758 Օգոստ. 26. ի Հռոմ)։

ՌՂԴ.

Դիպուած ինչ ցաւալի հանդիպեցաւ յաւուրս այսոսիկ ի պէլէկրատն, վասն զի բոլոր ծածուկն եպիսկոպոսանիստ պալատին և առագաստն մեծաչէն և հոյակապ եկեղեցւոյն այրեցաւ, և բովանդակ զանգակքն հալեցան. թէպէտ ի ներքուստ ոչ եկեղեցւոյն և ոչ պալատին ամենևին վնաս ինչ ոչ եղև, զի զարմանալի քարաշէն և կամարաձև շինուածք էին։ Բայց այսու ամենայնիւ այսպէս ասեն, մինչև 40 հազար մաճրու վնաս եղև և այժմ, զ[երապայծառ] եպիսկոպոսն մինչև ի ձմեռան կամի վերստին ծածկել զառագաստն այլ առաւել ամրագոյն քան զառաջինն։... Լուաք աստ վասն ընտրութեան սրբազան պապին, թէ է պապ կարտինալն պատուայու Գարլո ոէձօնիգօ վենէտիքու։ Յոյժ ուրախացաք, մանաւանդ Հ. Կարապետն մեզ լիապէս գրեաց, թէ որպիսի ուրախութիւն եղև ի վենէտիք։ Ինձ թուի գերյարգելի զի այժմ յոյժ բարւոք լինէր մեզ ունիլ զբնակութիւն ի հռոմ, և տեսական առնել զկացութիւն կրօնին մերոյ։ (Հ. Ղազարոս առ Մելգոնեան, 1758 Օգոստ. 28. [Եղիսաբեթուպոլիս])։

ՌՂԵ.

Էրէկեան օրն Ամենապայծառ Աստուածածնի եկեղեցոջ որ է մերձ բօրթօ բօբօլօյին եղև ըստ հին սովորութեան Գափէլլայ փափական, և անդ գումարեցաւ մեծահանդէս ժողովն առաքելական Պալատին. և զկնի կարտինալական ձայնաւոր Պատարագի, հրեշտակն Նապօլոյ թագաւորի եկն հանդիսիւ ընծայեաց սրբազանին զերիվարն և 12000 սքութ վասն հարկի սիկիլեայ կղզոյն.. և ասեն ի տօնի սրբոց Պահապան հրեշտակաց Պապն կարտինալ առնելոց է զիւր նիփոտն և զեպիս-կոպոսն Պատուայու և այլ ոմն ընդ նոսին։ (Յովսէփ եպս. առ Հ. Գեորգ, 1758 սեպտ. 9. ի Հռոմ)։

ՌՂԶ.

Պատրիարքն առ նախանձու զսառաֆօղլու սէրգիս վարդապետն, որ երբեմն այդր էր, յաքսորս առաքեաց ի կիպրոս կղզին, ի սեպտեմբերի 8, (զոր Հ. Մկրտիչն ոչ գիտէ, զի ելեալ էր աստի)...։ Պատճառն սիւրկիւնին նորա երկու են գլխաւորք։ Մինն նախանձն պատրիարքին, որով նախանձէր ընդ ընդունելութիւն նորա ի բազմաց. ընդ քարոզն, որով զովիւր ի բազմաց, և ընդ հոչակն նորա, որով հոչակիւր զոլ գիտուն, զի... կամի զի ինքն միայն զաց յերկրի իմաստուն. ուստի և ընդ գիտութիւն հրէի և տաճկի նախանձի։ (Հ. Զաքարիա առ Մելգոնեան, 1758 սեպտ. 13. [Կ. Պոլիս])։